

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն²

Հանրապետությունում 2003թ. հունվար-հունիսին, համաձայն ձկնորսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 360.1 մլն. դրամի ձկան որս, որը գերազանցել է 2002թ. մակարդակը 25.6%-ով (համադրելի գներով):

Ձկնորսության արդյունքները հանրապետությունում հունվար-հունիսին

(հազ. դրամ)

	2003թ.	2002թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
Կատարվել է ձկան որս`			
ընթացիկ գներով	360080.5	286184.8	x
համադրելի գներով	360080.5	286753.8	125.6
Իրացվել է ձուկ	269177.5	246122.8	x

² Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատմամբ:
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-հունիսին»